ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՔՆԱՐԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, ՀՀ, Գյումրի

Էլ. հասցե՝ *qnarik.hovakimyan@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v3i53.400

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է տարեցների խնամքի և հոգածության հաստատությունների բնակիչների հոգեբանական համատեղելիության հիմնախնդիրը: Տեսական մոտեցումների վերլուծությունն ու համադրումը ցույց է տալիս, որ հոգեբանական համատեղելիությունը բազմաբաղադրիչ սոցիալ-հոգեբանական երևույթ է, որի ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեն անձնային առանձնահատկությունները, միջանձնային հարաբերությունները, հաղորդակցությունը, հուզական ինտելեկտը, արժեքային կողմնորոշումները, կենսափորձը և սոցիալական միջավայրը: Տարեցների հաստատություններում երկարատև համատեղ բնակության պայմաններում այս գործոնների փոխազդեցությունը կարևոր է սոցիալական հարմարման, փոխադարձ աջակցության և հոգեբանական բարեկեցության տեսանկյունից: Հոգեբանական համատեղելիությունը դիտարկվում է որպես դինամիկ գործընթաց, որը կարող է փոփոխվել անձի և սոցիալական միջավայրի փոխազդեցության ընթացքում: Առանձնացվում են հոգեբանական համատեղելիության հոգեֆիզիոլոգիական, անձնային և սոցիալ-հոգեբանական մակարդակները, ինչպես նաև ընդգծվում է հուզական ինտելեկտի, արժեքային կողմնորոշումների և միջանձնային հարաբերությունների փոխկապակցված դերը: Ներկայացված տեսական մոտեցումը կարող է հիմք ծառայել տարեցների միջանձնային հարաբերությունների, սոցիալական հարմարման և հոգեբանական բարեկեցության հետագա

ուսումնասիրությունների, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրերի մշակման համար:

Բանալի բառեր՝ *հոգեբանական համատեղելիություն, միջանձնային հարաբերություններ, հուզական ինտելեկտ, արժեքային կողմնորոշումներ, անձնային առանձնահատկություններ, սոցիալական միջավայր, սոցիալական հարմարեցում, փոխադարձ աջակցություն, հոգեբանական բարեկեցություն, սոցիալ-հոգեբանական:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից սոցիալ-հոգեբանական գիտության շրջանակում հոգեբանական համատեղելիությունը դիտարկվում է որպես միջանձնային փոխազդեցության արդյունավետությունն ու հարաբերությունների կայունությունը պայմանավորող կարևոր գործոն: Այն առանձնահատուկ նշանակություն է ստանում երկարատև համատեղ կենսագործունեության պայմաններում, երբ անձինք շարունակաբար գտնվում են նույն սոցիալական միջավայրում և ներգրավվում են փոխադարձ շփումների ու գործունեության մեջ: Տարեցների խնամքի և հոգածության հաստատությունները նման սոցիալական միջավայրի յուրահատուկ օրինակ են: Այստեղ տարբեր կենսափորձ, անձնային առանձնահատկություններ, արժեքային կողմնորոշումներ և հաղորդակցման սովորություններ ունեցող անձինք երկար ժամանակ ապրում են միևնույն միջավայրում**:** Այս պայմաններում հոգեբանական համատեղելիությունը կարող է անդրադառնալ բնակիչների սոցիալական հարմարմանը, փոխադարձ աջակցության հնարավորություններին և հոգեբանական բարեկեցությանը: Հոգեբանական համատեղելիությունը նպատակահարմար է դիտարկել ոչ թե որպես անձանց նմանություն, այլ որպես դինամիկ գործընթաց, որը ձևավորվում է անձնային առանձնահատկությունների, հաղորդակցական վարքի, հուզական արձագանքների, արժեքային կողմնորոշումների և սոցիալական միջավայրի փոխազդեցության արդյունքում:

Ուսումնասիրության օբյեկտը: Ուսումնասիրության օբյեկտը տարեցների խնամքի և հոգածության հաստատությունների բնակիչների հոգեբանական համատեղելիությունն է՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ:

Ուսումնասիրության նպատակը: Ուսումնասիրության նպատակն է տեսականորեն վերլուծել տարեցների խնամքի և հոգածության հաստատությունների բնակիչների հոգեբանական համատեղելիության էությունը, հիմնական բաղադրիչները և դրա ձևավորման վրա ազդող հոգեբանական ու սոցիալ-հոգեբանական գործոնները:

Տեսական ուսումնասիրության մեթոդաբանությունը և մեթոդները: Մեթոդաբանության հիմքում դրված է հոգեբանական երևույթների համակարգային մոտեցումը, որը հնարավորություն է տալիս հոգեբանական համատեղելիությունը դիտարկել որպես անձի անհատական առանձնահատկությունների, միջանձնային հարաբերությունների և սոցիալական միջավայրի փոխկապակցվածության արդյունք: Հոդվածում կիրառվել են տեսական վերլուծության հետևյալ մեթոդները՝ գիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և համադրում, համեմատական վերլուծություն, տեսական ընդհանրացում և համակարգում: Տեսական վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են հոգեբանական համատեղելիության, միջանձնային հարաբերությունների, հուզական ինտելեկտի, արժեքային կողմնորոշումների և սոցիալ-հոգեբանական միջավայրի վերաբերյալ մոտեցումները: Հոգեբանական համատեղելիության առավել ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է անդրադառնալ դրա էությանը և հիմնական բնութագրերին: Հոգեբանական համատեղելիությունը բազմաբաղադրիչ սոցիալ-հոգեբանական երևույթ է, որն արտահայտվում է համատեղ գործունեության և հաղորդակցության ընթացքում փոխադարձ ընդունելի հարաբերություններ ձևավորելու և պահպանելու հնարավորությամբ: Այն ներառում է ոչ միայն որոշակի նմանություններ, այլև տարբերությունների ընդունում, փոխլրացում, հաղորդակցության արդյունավետություն և փոխադարձ հարմարում: Հոգեբանական երևույթների ուսումնասիրության համակարգային մոտեցումը կարևոր տեսական հիմք է հոգեբանական համատեղելիության բնույթը հասկանալու համար: Բ. Ֆ. Լոմովը հոգեբանական երևույթների ուսումնասիրության ժամանակ կարևորում է դրանց փոխկապակցվածությունն ու բազմամակարդակ բնույթը՝ հնարավորություն տալով անձի հոգեբանական առանձնահատկությունները դիտարկել ավելի լայն համակարգերի համատեքստում (Ломов Б. Ф.,1984): Այս մոտեցումը կարևոր է նաև հոգեբանական համատեղելիության ուսումնասիրության համար, քանի որ թույլ է տալիս այն չսահմանափակել առանձին անձնային հատկանիշներով և դիտարկել դրա ձևավորման մեջ ներգրավված տարբեր մակարդակների փոխազդեցությունը: Վ. Ն. Մյասիշչևի հարաբերությունների տեսության համաձայն՝ անձի հոգեբանական բնութագիրը ձևավորվում է նրա հարաբերությունների համակարգով, որն արտահայտվում է այլ մարդկանց, սեփական անձի և շրջապատող իրականության հետ կապերի և փոխհարաբերությունների միջոցով (Мясищев, 1995): Այս տեսանկյունից հոգեբանական համատեղելիությունը կարելի է հասկանալ որպես անձանց հարաբերությունների համակարգերի փոխազդեցության կարևոր բնութագիր: Այն ձևավորվում և դրսևորվում է ոչ միայն անձի առանձին հատկանիշների, այլև նրա վերաբերմունքի, հարաբերությունների և հաղորդակցական վարքի միջոցով: Ն. Ն. Օբոզովի ուսումնասիրություններում միջանձնային հարաբերությունները կապվում են համատեղ գործունեության

արդյունավետության, մարդկանց փոխազդեցության և փոխադարձ համատեղելիության պայմանների հետ (Обозов, 1979): Հետևաբար, տարբեր բնավորություն, հետաքրքրություններ կամ արժեքային առաջնահերթություններ ունեցող անձինք նույնպես կարող են արդյունավետորեն փոխազդել, եթե առկա են փոխադարձ հարգանք, հաղորդակցական ճկունություն և միմյանց առանձնահատկությունների ընդունում: Ուսումնասիրված մոտեցումների համադրության հիման վրա հոգեբանական համատեղելիությունը կարելի է պայմանականորեն դիտարկել երեք փոխկապակցված մակարդակներում՝ հոգեֆիզիոլոգիական, անձնային և սոցիալ-հոգեբանական: Հոգեֆիզիոլոգիական մակարդակը ներառում է խառնվածքային առանձնահատկությունները, արձագանքման արագությունն ու ակտիվության տարբերությունները:

Անձնային մակարդակում կարևոր են բնավորությունը, ինքնագնահատականը, մոտիվացիան, արժեքային կողմնորոշումները, կյանքի իմաստի վերաբերյալ պատկերացումները և վարքային կայուն ձևերը:

Սոցիալ-հոգեբանական մակարդակում ընդգրկվում են հաղորդակցությունը, փոխադարձ ընկալումը, սոցիալական դերերը, խմբային նորմերը և միջանձնային հարաբերությունները: Այսպիսով, համատեղելիությունը բազմամակարդակ համակարգ է, որի ձևավորման մեջ փոխազդում են անձի անհատական առանձնահատկությունները և սոցիալական միջավայրը: Տարեց հասակը մարդու կյանքի զարգացման առանձնահատուկ փուլ է, որը կապված է սոցիալական դերերի, միջանձնային կապերի, առօրյա գործունեության և կյանքի հեռանկարների փոփոխությունների հետ: Ծերացումը ներառում է ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև սոցիալական և հոգեբանական վերակազմակերպման գործընթացներ: Է. Էրիկսոնի հոգեսոցիալական զարգացման տեսության ընդլայնված ներկայացման մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կյանքի ուշ շրջանին և ծերության փուլում անձի կյանքի ուղու վերաիմաստավորմանը, անցած կյանքի փորձի ամբողջացմանը (Erikson, 1997): Այս տեսանկյունից սոցիալական դերերի փոփոխությունը, սոցիալական կապերի սահմանափակումը և նախկին միջավայրից հեռացումը կարող են ազդել մարդու սոցիալական ակտիվության ու հարաբերությունների բնույթի վրա: Խնամքի և հոգածության հաստատություն տեղափոխվելը տարեցից պահանջում է լրացուցիչ սոցիալական հարմարում: Նա հայտնվում է նոր միջավայրում, որտեղ անհրաժեշտ է հարմարվել հաստատության առօրյային, կանոններին և այլ մարդկանց մշտական ներկայությանը: Հետևաբար, նման հաստատություններում հոգեբանական համատեղելիության խնդիրը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Միջանձնային հարաբերությունները հոգեբանական համատեղելիության հիմնական դրսևորումներից են: Երկարատև համատեղ բնակության պայմաններում անձինք մշտապես շփվում են, մասնակցում ընդհանուր գործունեության և ձևավորում տարբեր հարաբերություններ:

Վստահության, փոխադարձ հարգանքի և աջակցության վրա հիմնված հարաբերությունները կարող են նպաստել սոցիալական ներառվածությանը, մինչդեռ հաճախակի հակասություններն ու փոխադարձ անհանդուրժողականությունը կարող են դժվարացնել սոցիալական հարմարումը: Մյասիշչևի հարաբերությունների տեսությունը հնարավորություն է տալիս այս գործընթացները դիտարկել անձի հարաբերությունների ամբողջական համակարգի շրջանակում (Мясищев, 1995): Այս մոտեցման տեսանկյունից անձի վարքն ու հարաբերությունները պայմանավորված են ոչ միայն իրավիճակի արտաքին առանձնահատկություններով, այլև այն վերաբերմունքով, որը ձևավորվել է տվյալ անձի, այլ մարդկանց և սոցիալական միջավայրի նկատմամբ: Միջանձնային հարաբերությունների բնույթը պայմանավորվում է նաև փոխադարձ ընկալման, սպասումների և հաղորդակցության առանձնահատկություններով: Հաստատության բնակիչների միջև հարաբերություններում կարևոր նշանակություն ունի ոչ միայն շփման հաճախականությունը, այլև դրա բովանդակությունը, հուզական երանգը և փոխադարձ ընդունման մակարդակը: Հաղորդակցությունը միջանձնային փոխազդեցության հիմնական մեխանիզմներից է, քանի որ ներառում է տեղեկատվության փոխանցում, փոխադարձ ընկալում, հուզական արձագանք և հարաբերությունների կարգավորում: Տարեցների համատեղ բնակության պայմաններում արդյունավետ հաղորդակցությունը կարող է նպաստել փոխըմբռնմանը և հակասությունների կանխմանը: Դիմացինին լսելու, սեփական տեսակետն արտահայտելու և այլ կարծիքների նկատմամբ հանդուրժողականություն դրսևորելու կարողությունները հարաբերությունների կառուցողական զարգացման կարևոր նախադրյալներ են: Լոմովի համակարգային մոտեցման շրջանակում հաղորդակցությունը կարելի է դիտարկել որպես մարդկանց միջև տեղեկատվության փոխանակման, փոխադարձ ազդեցության և միմյանց ընկալման բազմակողմ գործընթաց (Ломов, 1984): Հետևաբար, հաղորդակցության առանձնահատկությունները կարևոր նշանակություն ունեն նաև հոգեբանական համատեղելիության ձևավորման և պահպանման համար: Հաղորդակցական դժվարությունները կարող են առաջացնել փոխադարձ թյուրըմբռնումներ, դժգոհություն և լարվածություն, մինչդեռ կառուցողական հաղորդակցությունը կարող է նպաստել հարաբերությունների կայունացմանը: Հոգեբանական համատեղելիության կարևոր բաղադրիչ է նաև հուզական ոլորտը: Համատեղ բնակության պայմաններում դժգոհությունը, վիրավորանքը, անհանգստությունն ու լարվածությունը կարող են բացասաբար անդրադառնալ հարաբերությունների վրա: Այդ պատճառով սեփական և դիմացինի հույզերը ճանաչելու, հասկանալու և կարգավորելու կարողությունները կարող են նպաստել կառուցողական փոխազդեցությանը: Հուզական ինտելեկտի հայեցակարգում Ջ. Մեյերը և Պ. Սալովեյը կարևորում են հույզերի ընկալման, դրանց նշանակության ըմբռնման և

հուզական տեղեկատվության օգտագործման ու կառավարման կարողությունները (Mayer, Salovey, 1997): Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հուզական կարողությունները դիտարկել որպես միջանձնային փոխազդեցության կարևոր հոգեբանական ռեսուրս: Տարեցների համատեղ բնակության պայմաններում սեփական հուզական վիճակի ճանաչումն ու կարգավորումը, ինչպես նաև դիմացինի հուզական վիճակի ըմբռնումը կարող են նպաստել փոխըմբռնմանը և հարաբերությունների կայունությանը: Այս համատեքստում հուզական ինքնակարգավորումը և էմպատիկ ընկալումը կարելի է դիտարկել որպես միջանձնային հարաբերությունների կայունությանը նպաստող հոգեբանական ռեսուրսներ: Դրանք հատկապես կարևոր են այն իրավիճակներում, երբ համատեղ բնակվող անձանց միջև առկա են տարիքային, բնավորության, կենսափորձի կամ արժեքային տարբերություններ: Հուզական ինտելեկտի զարգացումը կարող է նպաստել ոչ միայն հույզերի ճանաչմանն ու կառավարմանը, այլև դիմացինի վարքի նկատմամբ ավելի իրատեսական ընկալման ձևավորմանը: Արժեքային կողմնորոշումները անձի վարքի և որոշումների ներքին կարգավորիչներից են: Տարեց մարդն ունի երկարատև կենսափորձ և ձևավորված արժեքային համակարգ, ուստի տարբեր արժեքային առաջնահերթություններ ունեցող անձանց համատեղ բնակությունը կարող է առաջացնել ինչպես փոխըմբռնում, այնպես էլ տարաձայնություններ: Մ. Ռոկիչի արժեքների տեսության համաձայն՝ արժեքները անձի համար կարևոր համոզմունքներ են, որոնք կարող են կազմակերպվել արժեքների համակարգում և ուղղորդել վերաբերմունքն ու վարքը: Նա տարբերակում է վերջնանպատակային և գործիքային արժեքներ, որոնց հարաբերակցությունն ու առաջնահերթությունը կարող են արտահայտել անձի արժեքային կողմնորոշումները(Rokeach, 1973): Այս տեսանկյունից տարեցների միջև արժեքային տարբերությունները կարող են ազդել նրանց փոխադարձ սպասումների, հաղորդակցության և վարքի վրա: Սակայն արժեքային տարբերություններն ինքնին չեն նշանակում անհամատեղելիություն: Ավելի կարևոր է դիմացինի տարբերությունները ընդունելու, սեփական դիրքորոշումը կառուցողական ձևով արտահայտելու և փոխադարձ հարգանքը պահպանելու կարողությունը: Հետևաբար, արժեքային կողմնորոշումները պետք է դիտարկել ոչ թե որպես համատեղելիությունը մեխանիկորեն որոշող գործոն, այլ որպես միջանձնային հարաբերությունների վրա ազդող կարևոր բաղադրիչ: Փոխադարձ հարգանքը, ինքնուրույնության ընդունումը, փոխըմբռնումը, հանդուրժողականությունը և փոխօգնությունը կարող են նպաստել համատեղ բնակության պայմաններում հարաբերությունների կառուցողական զարգացմանը: Միջանձնային հարաբերությունների վրա ազդեցություն ունի նաև կենսափորձը: Յուրաքանչյուր անձ նոր միջավայր է բերում իր նախկին հարաբերությունների փորձը, սովորությունները, համոզմունքներն ու վարքային ձևերը, ինչի հետևանքով նույն իրավիճակը տարբեր մարդիկ կարող են ընկալել տարբեր կերպ: Այս

տարբերությունները կարող են ազդել հաղորդակցության, փոխադարձ սպասումների և սոցիալական վարքի վրա: Հաստատության բնակիչների միջև հարաբերություններում կենսափորձի նշանակությունն առավել ընդգծված է, քանի որ յուրաքանչյուր անձ ունի իր կյանքի պատմությունը, սոցիալական դերերի փորձը, ընտանեկան և մասնագիտական հարաբերությունների առանձնահատկությունները: Այդ փորձը կարող է պայմանավորել ինչպես նոր հարաբերություններ ձևավորելու պատրաստակամությունը, այնպես էլ այլ մարդկանց վարքի նկատմամբ ունեցած սպասումները: Միևնույն ժամանակ, նախկին փորձը չի կանխորոշում հարաբերությունների հետագա բնույթը, քանի որ նոր սոցիալական միջավայրը կարող է նպաստել վարքային և հաղորդակցական ձևերի փոփոխությանը: Խնամքի և հոգածության հաստատությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես սոցիալական և կենցաղային աջակցություն տրամադրող կառույց, այլև որպես սոցիալ-հոգեբանական միջավայր, որտեղ ձևավորվում են նոր հարաբերություններ, սոցիալական դերեր և փոխազդեցության ձևեր: Հաստատության սոցիալ-հոգեբանական մթնոլորտը կարող է նպաստել կամ խոչընդոտել բնակիչների փոխադարձ հարմարմանը՝ կախված հաղորդակցության մշակույթից, սոցիալական աջակցության մակարդակից և խմբային հարաբերությունների բնույթից: Եթե միջավայրը նպաստում է փոխադարձ հարգանքի, ընդունման և համագործակցության ձևավորմանը, ապա բնակիչների համար ավելի հեշտ կարող է դառնալ նոր պայմաններին հարմարվելը և սոցիալական կապերի պահպանումը: Այսպիսով, տարեցների հոգեբանական համատեղելիությունը հնարավոր չէ բացատրել միայն անձի անհատական առանձնահատկություններով: Այն ձևավորվում է «անձ – միջանձնային հարաբերություններ – խումբ – սոցիալական միջավայր» համակարգում՝ անձի բնավորության, արժեքների, հուզական արձագանքների և կենսափորձի ու սոցիալական միջավայրի շարունակական փոխազդեցության արդյունքում: Միևնույն անձը տարբեր միջավայրերում կարող է դրսևորել հարաբերությունների և վարքի տարբեր ձևեր: Հաստատության պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունի փոխադարձ հարմարման գործընթացը, որի ընթացքում բնակիչը հարմարվում է ոչ միայն հաստատության պայմաններին, այլև այլ մարդկանց ներկայությանը, վարքային առանձնահատկություններին և հաղորդակցման ձևերին: Տեսական մոտեցումների համադրումը ցույց է տալիս, որ հոգեբանական համատեղելիությունը նպատակահարմար է դիտարկել որպես փոխկապակցված գործոնների ամբողջություն: Անձնային առանձնահատկությունները պայմանավորում են անձի արձագանքման և փոխազդեցության անհատական ձևերը, հուզական ինտելեկտը նպաստում է սեփական և դիմացինի հուզական վիճակների ճանաչմանն ու կարգավորմանը, միջանձնային հարաբերությունները ձևավորում են փոխազդեցության անմիջական դաշտը, արժեքային կողմնորոշումները՝ վարքի և փոխադարձ սպասումների որոշակի

ուղղվածությունը, իսկ սոցիալական միջավայրը ստեղծում է այն պայմանները, որոնց շրջանակում տեղի է ունենում այդ գործընթացների փոխազդեցությունը: Ուստի տարեցների խնամքի և հոգածության հաստատություններում հոգեբանական համատեղելիությունը կարելի է դիտարկել որպես «անձ – հուզական ոլորտ – միջանձնային հարաբերություններ – արժեքային կողմնորոշումներ – սոցիալական միջավայր» փոխկապակցված համակարգում ձևավորվող գործընթաց: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հոգեբանական համատեղելիությունը հասկանալ ոչ թե որպես կայուն և անփոփոխ հատկանիշ, այլ որպես փոխազդեցության ընթացքում ձևավորվող և փոփոխվող հարաբերական վիճակ: Դրա մակարդակն ու դրսևորումները կարող են փոփոխվել ինչպես անձի ներքին առանձնահատկությունների, այնպես էլ սոցիալական միջավայրի պայմանների փոփոխության հետևանքով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, իրականացված տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեցների խնամքի և հոգածության հաստատությունների բնակիչների հոգեբանական համատեղելիությունը բազմամակարդակ, դինամիկ և համակարգային սոցիալ-հոգեբանական երևույթ է: Այն չի սահմանափակվում անձանց նմանություններով և ներառում է անձնային առանձնահատկությունների, հաղորդակցության, հուզական գործընթացների, արժեքային կողմնորոշումների, կենսափորձի և սոցիալական միջավայրի փոխկապակցվածությունը: Տարեց հասակում սոցիալական դերերի փոփոխությունը, միջանձնային կապերի վերակազմավորումը և նոր պայմաններին հարմարվելու անհրաժեշտությունը մեծացնում են սոցիալական միջավայրի նշանակությունը: Խնամքի և հոգածության հաստատություններում հոգեբանական համատեղելիության ձևավորմանը կարող են նպաստել փոխադարձ ընդունումը, արդյունավետ հաղորդակցությունը, հուզական ինքնակարգավորումը, էմպատիկ ընկալումը, արժեքային տարբերությունների ընդունումը և սոցիալական աջակցությունը: Հոգեբանական համատեղելիությունը նպատակահարմար է դիտարկել որպես անձի անհատական առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական միջավայրի փոխազդեցության արդյունքում ձևավորվող գործընթաց: Այս մոտեցումը տեսական հիմք է ստեղծում տարեցների միջանձնային հարաբերությունների, սոցիալական հարմարման և հոգեբանական բարեկեցության փոխկապակցվածությունը հասկանալու համար: Տեսական վերլուծության արդյունքները կարող են հիմք ծառայել տարեցների հոգեբանական համատեղելիության հետագա ուսումնասիրությունների, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցությանն ուղղված ծրագրերի մշակման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ломов Б. Ф. (1984) Методологические и теоретические проблемы психологии.

Москва.

Мясищев В. Н. (1995) Психология отношений: избранные психологические труды / под ред. А. А. Бодалева. Москва; Воронеж: Институт практической психологии.

Обозов Н. Н. (1979) Межличностные отношения. Ленинград: Издательство Ленинградского университета.

Erikson E. H., Erikson J. M. (1997) The Life Cycle Completed: Extended Version with New Chapters on the Ninth Stage of Development by Joan M. Erikson. New York: W. W. Norton.

Mayer J. D., Salovey P. (1997) What is Emotional Intelligence? In: Salovey P., Sluyter D. J. Emotional Development and Emotional Intelligence: Implications for Educators. New York: Basic Books.

Rokeach M. (1973) The Nature of Human Values. New York: Free Press.

REFERENCE LIST

Erikson E. H., Erikson J. M. (1997) The Life Cycle Completed: Extended Version with New Chapters on the Ninth Stage of Development by Joan M. Erikson. New York: W. W. Norton.

Lomov B. F. (1984) Metodologicheskie i teoreticheskie problemy psihologii *(Methodological and theoretical problems of psychology)*. Moskva.

Myasishchev V. N. (1995) Psihologiya otnoshenij: izbrannye psihologicheskie trudy *(The Psychology of Relationships: Selected Psychological Works)*. pod red. A. A. Bodaleva. Moskva; Voronezh: Institut prakticheskoj psihologii.

Mayer J. D., Salovey P. (1997) What is Emotional Intelligence? In: Salovey P., Sluyter D. J. Emotional Development and Emotional Intelligence: Implications for Educators. New York: Basic Books.

Obozov N. N. (1979) Mezhlichnostnye otnosheniya. Leningrad *(Interpersonal relationships. Leningrad)*. Izdatel'stvo Leningradskogo universiteta.

Rokeach M. (1973) The Nature of Human Values. New York: Free Press.

РЕЗЮМЕ

ПСИХОЛОГИЧЕСКАЯ СОВМЕСТИМОСТЬ В УЧРЕЖДЕНИЯХ ПО УХОДУ И ЗАБОТЕ О ПОЖИЛЫХ ЛЮДЯХ

Кнарик Овакимян

В статье теоретически исследуется проблема психологической совместимости жителей учреждений по уходу и заботе о пожилых людях. Анализ и сопоставление теоретических подходов показывают, что психологическая совместимость представляет собой многокомпонентное социально-психологическое явление, в формировании которого важное значение имеют личностные особенности, межличностные отношения, общение, эмоциональный интеллект, ценностные ориентации, жизненный опыт и социальная среда. В условиях длительного совместного проживания взаимодействие этих факторов приобретает особое значение с точки зрения социальной адаптации, взаимной поддержки и психологического благополучия. Теоретический анализ позволяет рассматривать психологическую совместимость как динамический процесс, изменяющийся в ходе взаимодействия личности и социальной среды. В статье также рассматриваются уровни психологической совместимости и раскрывается взаимосвязь эмоционального интеллекта, ценностных ориентаций и межличностных отношений в процессе взаимодействия пожилых людей. Представленный подход может служить теоретической основой для дальнейшего изучения межличностных отношений и социально-психологической адаптации пожилых людей, а также для разработки практических программ социально-психологической поддержки.

Ключевые слова: *психологическая совместимость, межличностные отношения, эмоциональный интеллект, ценностные ориентации, личностные особенности, социальная среда, социальная адаптация, взаимная поддержка, психологическое благополучие, социально-психологический.*

SUMMARY

PSYCHOLOGICAL COMPATIBILITY IN INSTITUTIONS FOR THE CARE AND SUPPORT OF OLDER PEOPLE

Knarik Hovakimyan

The article theoretically examines the problem of psychological compatibility among residents of institutions providing care and support for older people. The analysis and comparison of the theoretical approaches reviewed demonstrate that psychological compatibility is a multidimensional socio-psychological phenomenon significantly influenced by personal characteristics, interpersonal relationships, communication, emotional intelligence, value orientations, life experience, and the social environment. Under conditions of long-term cohabitation, the interaction of these factors is particularly important in terms of social adaptation, mutual support, and psychological well-being. The theoretical analysis provides grounds for viewing psychological compatibility as a dynamic process that changes through the interaction between the individual and the social environment. The article also considers the levels of psychological compatibility and

highlights the interrelationship of emotional intelligence, value orientations, and interpersonal relationships in the interaction of older people. The presented approach may serve as a theoretical basis for further research into interpersonal relationships and the socio-psychological adaptation of older people, as well as for the development of practical programs aimed at providing socio-psychological support.

Keywords: *psychological compatibility, interpersonal relationships, emotional intelligence, value orientations, personal characteristics, social environment, social adaptation, mutual support, psychological well-being, socio-psychological.*

Հոդվածը սպացվել է՝ 29.07.2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 30.07.2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 02.09.2026